Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Պ-871-14.10.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ *ԼՐԱՑՈՒՄՆԵՐ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի առաջին պարբերության «անձնագրին փոխարինող» բառերը փոխարինել «նույնականացման քարտը, անձնագրին փոխարինող» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4-րդ մասով.

«4. Եթե ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը նույնականացման քարտ է, ապա ընտրողների ցուցակի լրացուցիչ նշումների համար նախատեսված սյունակում կատարվում է գրառում այդ մասին, իսկ նույնականացման քարտով քվեարկողների թիվը հաշվարկվում և նշվում է քվեարկության արդյունքների արձանագրություններում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ երկրորդ նախադասությամբ. «Նույնականացման քարտով քվեարկությանը մասնակցելիս՝ նույնականացման քարտում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը չի ստուգվում, իսկ նույնականացման քարտը չի դրոշմակնքվում:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող *օրը*:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1	2	3	4
«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
Պատգամավորներ Վ.Բաղդասարյան, Տ.Վարդանյան, Ա.Ախոյան, Ռ.Մուրադյան, Ա.Գեղամյան, Բ.Առաքելյան, Մ.Եսայան, Հ.Բաբուխանյան, Խ.Հարությունյան	1-ին հոդված	Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2-րդ մասով. «2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4-րդ մասով. «4. Եթե ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը նույնականացման քարտ է, ապա ընտրողների ցուցակի լրացուցիչ նշումների համար նախատեսված սյունակում կատարվում է գրառում այդ մասին, իսկ նույնականացման քարտով քվեարկողների թիվը հաշվարկվում և նշվում է քվեարկության արդյունքների արձանագրություններում:»:	Առաջարկությունն ընդունվել է:
Պատգամավոր Ա.Վարդանյան	1-ին հոդված	1.Նույնականացման քարտով քվեարկող ընտրողների դեպքում ընտրողների ցուցակի լրացուցիչ նշումների համար նախատեսված սյունակում նշվում է նույնականացման քարտի համարը:	Առաջարկություններն ընդունվել են այլ խմբագրությամբ:

		2.Նույնականացման քարտով քվեարկողների թիվը հաշվառել առանձին և նշել քվեարկության արդյունքների արձանագրությունում: 3.Քննարկել ընտրողների ցուցակում նույնականացման քարտ ունեցողներին որևէ պայմանական նշանով տարբերակելու տեխնիկական հնարավորություն:»:	
Հեղինակներ	3-րդ հոդված	«տասներորդ օրը» բառերը փոխարինել «օրը» բառով:	+
«Հայ ազգային կոնգրես» խմբակցության ղեկավար Լ.Զուրաբյան	Նոր հոդվածներ	Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 58-րդ հոդվածում՝ 1.Վերնագրում «քվեատուփը» բառից հետո դնել ստորակետ և նախադասությունը լրացնել «ընտրողի մատը դրոշմելու համար նախատեսված թանաքը, ընտրողի մատին դրոշմի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու համար նախատեսված սարքը» բառերով: 2. Լրացնել նոր՝ «10»-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. «10. Ընտրողի մատը թանաքի կայուն հետք թողնելու միջոցով դրոշմելու համար նախատեսված թանաքը և ընտրողի մատին դրոշմի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու համար նախատեսված սարքերը ձեռք է բերում և ընտրական հանձնաժողովներին տրամադրում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Դրանք ընտրական հանձնաժողովներին տրամադրելու, պահպանելու, օգտագործելու և քվեարկության օրվա ընթացքում օգտագործվող թանաքի՝ սույն օրենքով սահմանված չափանիշերին համապատասխանությունը վերահսկելու կարգը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը»: Հոդված 2. Օրենսգրքի 59-րդ հոդվածում՝ 1. 2-րդ մասի «անհատական կնիքները» բառերից հետո դնել ստորակետ և նախադասությունը լրացնել «ընտրողի մատը դրոշմելու համար նախատեսված թանաքի տուփը (տուփերը), ընտրողի մատին թանաքի դրոշմի առկայությունը	Առաջարկությունը չի ընդունվել:

		ստուգելու համար նախատեսված սարքը (սարքերը)» բառերով: Հոդված 3. Օրենսգրքի 62-րդ հոդվածում՝ 1.1-ին մասը լրացնել նոր՝ «6»-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ. «6) ընտրողների մատներին թանաքի դրոշմի առկայությունը ստուգող և ընտրողների մատները թանաքով դրոշմող անդամին»: 2.2-րդ մասի առաջին նախադասությունը լրացնել «ընտրողի մատը դրոշմելու համար նախատեսված թանաքի տուփը, ընտրողի մատին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու համար նախատեսված սարքը» բառերով, իսկ երկրորդ նախադասությունը՝ «ընտրողի մատը դրոշմելու համար նախատեսված թանաքի տուփը և ընտրողի մատին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու համար նախատեսված սարքը՝ ընտրողների մատներին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու և ընտրողների մատները թանաքով դրոշմելու համար պատասխանատու անդամին»: Հոդված 4. Օրենսգրքի 66-րդ հոդվածում՝ 1.Վերնագրում «Քվեաթերթիկը լրացնելու» բառերից հետո դնել ստորակետ և լրացնել «ընտրողի մատին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու, ընտրողի մատը թանաքով դրոշմելու» բառերը: 2.3-րդ մասի առաջին նախադասության «քվեատուփին» բառը փոխարինել «ընտրողների մատներին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու և ընտրողների մատները թանաքով դրոշմելու համար պատասխանատու հանձնաժողովի	

		անդամի աշխատանքային սեղանին»: 3.Լրացնել նոր՝ «3.1» մասով, հետևյալ բովանդակությամբ. «3.1 Ընտրողների մատներին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու և ընտրողների մատները թանաքով դրոշմելու համար պատասխանատու հանձնաժողովի անդամի և քվեարկության ծրարը տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով կնքող հանձնաժողովի անդամի աշխատանքային սեղանները գտնվում են կողք – կողքի՝ քվեատուփի մոտ»: 4.Լրացնել նոր՝ «3.2» մասով, հետևյալ բովանդակությամբ. «3.2 Ընտրողների մատներին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու և ընտրողների մատները թանաքով դրոշմելու համար պատասխանատու հանձնաժողովի անդամը ընտրողի մատին թանաքի դրոշմի բացակայությունը ստուգելու համար նախատեսված սարքով ստուգում է ընտրողի մատին թանաքի դրոշմի բացակայությունը, դրա բացակայության դեպքում թանաքով դրոշմում է ընտրողի մատը, որից հետո քվեարկության ծրարի դիմային մասի՝ դրա համար նախատեսված տեղում դնում է իր անհատական կնիքը: Թանաքի դրոշմը դրվում է ընտրողի աջ կամ ձախ ձեռքի բութ մատի արտաքին՝ եղունգով պատված հատվածին: Եթե ընտրողի մատներին առկա է ընտրությանը մասնակցությունը հաստատող թանաքի հետք, ապա հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահի միջոցով տեղեկացնում է հերթապահող ոստիկաններին հանցագործության փորձի մասին, հանում է քվեաթերթիկը քվեարկության ծրարից, ծրարը վերադարձնում քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող հանձնաժողովի անդամին, իսկ քվեաթերթիկը կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անհապաղ մարում է»: 5.4-րդ մասի առաջին նախադասությունում «անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը ստուգելուց և դրա բացակայության դեպքում անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելուց հետո» բառերը փոխարինել	

		«ձեռքի մատներին ընտրությանը մասնակցությունը հաստատող թանաքի հետքի առկայությունը ստուգելուց հետո» բառերով: 6.4-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Եթե ընտրողի ձեռքի մատներին բացակայում է ընտրությանը մասնակցությունը հաստատող թանաքի հետքը, ապա հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահի միջոցով տեղեկացնում է հերթապահող ոստիկաններին հանցագործության փորձի մասին, հանում է քվեաթերթիկը քվեարկության ծրարից, մարում է այն, իսկ քվեարկության ծրարին ամրացնելով քվեարկության ծրարի ցանկացած մեկ ելունդ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անհապաղ մարում է»: 7.5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «5. Ընտրողի ձեռքի մատին ընտրությանը մասնակցությունը հաստատող թանաքի կայուն հետք թողնելու միջոցով դրոշմման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է»:	
«Հայ ազգային կոնգրես» խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյան	Նոր նախագիծ	ՆԱԽԱԳԻԾ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՕՐԵՆՔԸ** **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի (համարը՝ ՀՕ-528-Ն) քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 154[1]-րդ հոդվածում՝ 1. Վերնագրում «իրացնելը» բառից հետո դնել ստորակետ և լրացնել «ընտրողի մատի դրոշմման համար նախատեսված թանաքը կամ ընտրողի	Առաջարկությունը չի ընդունվել:

		մատին թանաքի դրոշմի բացակայությունը կամ առկայությունը ստուգելու համար նախատեսված սարքը օրենքով սահմանված չափանիշներին չհամապատասխանող թանաքով կամ սարքով փոխարինելը, օրենքով սահմանված չափանիշներին չհամապատասխանող թանաք կամ սարք հանձնելը կամ իրացնելը» բառերով: 2.1-ին մասի առաջին պարբերությունում «իրացնելը» բառից հետո դնել ստորակետ և լրացնել «ընտրողի մատի դրոշմման համար նախատեսված թանաքը կամ ընտրողի մատին թանաքի դրոշմի բացակայությունը կամ առկայությունը ստուգելու համար նախատեսված սարքը օրենքով սահմանված չափանիշներին չհամապատասխանող թանաքով կամ սարքով փոխարինելը, օրենքով սահմանված չափանիշներին չհամապատասխանող թանաք կամ սարք հանձնելը կամ իրացնելը» բառերով: **Հոդված 2.** Օրենսգրքի 154[3]-րդ հոդվածում՝ 1. Վերնագրում «կնիքը» բառից հետո դնել ստորակետ, և լրացնել «ընտրողի ձեռքին նշում կատարելու համար նախատեսված թանաքի տուփը» բառերով: 2. Վերնագրում «կնիքի» բառը փոխարինել «դրանց» բառով: 3. Առաջին պարբերությունում «կնիքը» բառից հետո դնել ստորակետ, և լրացնել «ընտրողի ձեռքին նշում կատարելու համար նախատեսված թանաքի տուփը» բառերով: 4. Առաջին պարբերությունում «կնիքի» բառից հետո դնել ստորակետ և լրացնել «ընտրողի ձեռքին նշում կատարելու համար նախատեսված թանաքի տուփի» բառերով: **Հոդված 6.** Օրենսգիրքը լրացնել նոր՝«154[7]» հոդվածով, հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 154[7]. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու կամ այլ նպատակով քվեարկության ընթացքին խոչընդոտելը** 1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու կամ այլ նպատակով ընտրողի	

		մատին նշում կատարելու համար նախատեսված թանաքի տուփը, ընտրողի մատին թանաքի դրոշմի բացակայությունը կամ առկայությունը ստուգելու համար նախատեսված սարքը հափշտակելը կամ միտումնավոր փչացնելը, կամ սահմանված նմուշից տարբերվող այլ կնիքներով, թանաքով կամ սարքով փոխարինելը, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:»: 2.Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»: **Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:	
«Նույնականացման քարտերի մասին»		**Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**	
Հեղինակներ	2-րդ հոդված	«տասներորդ օրը» բառերը փոխարինել «օրը» բառով:	+